Երկրորդ ընթերցում
Կ-854-03.06.2024-ՊԻ-011/01
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:»

Հոդված 2. Օրենսգիրքի 57-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները տեղափոխվում են բուժական քրեակատարողական հիմնարկ: Բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալը պահվում է սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով միջին անվտանգային գոտու խիստ պայմանների համար նախատեսված պայմաններում: Բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով:»:

Հոդված 3. Օրենսգիրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում «բժշկական ստորաբաժանում» բառերից հետո լրացնել «իսկ երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները բուժական քրեակատարողական հիմնարկ» բառերով:

Հոդված 4. Օրենսգիրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում «բժշկական ստորաբաժանումներում» բառերից հետո լրացնել «և բուժական քրեակատարողական հիմնարկում» բառերով:

Հոդված 5. Օրենսգիրքի 91-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով.

«3.1 Հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացնում է բուժական քրեակատարողական հիմնարկը:»:

Հոդված 6. Օրենսգիրքի 106-րդ հոդվածի 7-րդ մասում «քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանում» բառերից հետո լրացնել «կամ բուժական քրեակատարողական հիմնարկ» բառերով, իսկ «քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանումում» բառերից հետո՝ «կամ բուժական քրեակատարողական հիմնարկում» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ~~ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:»

Հոդված 2. Օրենսգիրքի 57-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները տեղափոխվում են բուժական քրեակատարողական հիմնարկ: Բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալը պահվում է սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով միջին անվտանգային գոտու խիստ պայմանների համար նախատեսված պայմաններում: Բուժական քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով:»:

Հոդված 3. Օրենսգիրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում «բժշկական ստորաբաժանում» բառերից հետո լրացնել ~~«կամ բուժական քրեակատարողական հիմնարկ»~~«իսկ երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները բուժական քրեակատարողական հիմնարկ» -բառերով:

Հոդված 4. Օրենսգիրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում «բժշկական ստորաբաժանումներում» բառերից հետո լրացնել «և բուժական քրեակատարողական հիմնարկում» բառերով:

Հոդված 5. Օրենսգիրքի 91-րդ հոդվածը~~ի~~ ~~3-րդ մաս~~ում~~ը~~ ~~«բժշկական ստորաբաժանումները,» բառերից հետո լրացնել «բուժական քրեակատարողական հիմնարկը,» բառերով:~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով.

«3.1 Հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացնում է բուժական քրեակատարողական հիմնարկը:»:

Հոդված 6. Օրենսգիրքի 106-րդ հոդվածի 7-րդ մասում «քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանում» բառերից հետո լրացնել «կամ բուժական քրեակատարողական հիմնարկ» բառերով, իսկ «քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանումում» բառերից հետո՝ «կամ բուժական քրեակատարողական հիմնարկում» բառերով:

~~**Հոդված 7.** Օրենսգիրքի 169-րդ հոդվածի 7-րդ մասում «2024» բառը փոխարինել «2025» բառով:~~

Հոդված 7 ~~8~~. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-854-03.06.2024-ՊԻ-011/01) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել փոփոխություն բառը, քանի որ նախագծով կատարվում են միայն լրացումներ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	Նախագծի 3-րդ և 5-րդ հոդվածներ	Անհրաժեշտ է տարանջատել թե, որ դեպքում են դատապարտյալները տեղափոխվում բուժական քրեակատարողական հիմնարկ, և որ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանում: Առաջարկում ենք վերոնշյալի հիման վրա քննարկվող նորմերում կատարել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համապատասխան հստակեցում:		
3.	**Կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծից հանել 7-րդ հոդվածը, քանի որ ժամանակային առումով կորցրել է իր նպատակային նշանակությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագիծը ԱԺ արտահերթ նստաշրջանի օրակարգ է ընդգրկվել հուլիսի 11-ին և տվյալ դրույթը արդեն իսկ հուլիսի 1-ից գործողության մեջ է, ուստի փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Միաժամանակ, Նախագիծը մշակվել և շրջանառվել է 2023 թվականի դեկտեմբերին և այս ժամանակահատվածում Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումները հնարավորինս ապահովվել են համապատասխան պայմաններով՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների շենքային հնարավորությունները:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	**Կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	**Կառավարություն**	Նախագիծ	Նախագծում համարակալումները անհրաժեշտ է փոփոխել՝ նկատի ունենալով, որ 7-րդ հոդվածը նախագծից հանվել է:	Ընդունվել է:	Ընդունվել է: